



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 077778199 Էլ. Փոստ info_yeghegnadzor@aarhus.am.
hrachqocharyan@mail.ru

03/15

Վայոց ձոր մարզի Հերմոն համայնի
Համայնքապետ Գայ Օհանյանին
Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող
Հրաչ Քոչարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Օհանյան

2015 թվականի հոկտեմբերի 19-ին համացանցում <<ԷկոԼուր>> բնապահպանական կայքը տեղեկատվություն է տարածել, որ հոկտեմբերի 17-ին ՀՀ Վայոց ձոր մարզի Հերմոն համայնքի վարչական տարածքում, Եղեգիս գետի հարևանությամբ, ԷկոԼուրի ֆոտոխցիկը ֆիքսել է հարյուրավոր հատված ծառերի կոճղեր (<http://www.ecolur.org/hy/news/forest/mass-tree-felling-near-yeghegis-river-photos/7737/>):

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանը խնդրում եմ Ձեզ, Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական, մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ում է պատկանում ծառահատումների տարածքը, և եթե համայնքի տիրապետության տակ չէ, ապա, երբ է կատարվել օտարումը, ինչ նպատակով, տրամադրել համապատասխան որոշումը.
2. Եթե տարածքը օտարվել է, ապա տարածքի օտարման ժամանակ ինչ ծառեր են առկա եղել տարածքում.
3. Արդյո՞ք հատված ծառերի տարածքը գտնվում է Եղեգիս գետի պաշտպանիչ գոտում, թե ոչ:

Տեղեկատվությունը տրամադրելու մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Կանխավ շնորհակալություն.

Հարգանքով Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Հ. Քոչարյան
20.10.2015թ.